# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 21 | Հունվար | 2019 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 11 | Հունվար | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 3793749258 |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 11 Հունվար, 2019 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 0 0 6 8 1 3 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ ԲԲԸ / N 163288639103 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Դ.ԱՆՀԱՂԹ 19/1 70 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 3 3 3 3 4 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն / N 900011021947 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ Նալբանդյան 130 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | | |
|---|---|---|
| | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ Ո Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժ.-քի պետի տեղակալ Կ.Ներսիսյանի որոշմ.գրավոր թարգմ.հայ.վրաց. | էջ | 68 | 3000 | | 204000 |
| 2 | ՀՀ Ո Նոյեմբերյանի բաժնի պետ Ա.Լ.Անտոնյանի որոշմամբ բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն | ժամ | 3.5 | 5000 | | 17500 |
| Ընդամենը | | | | | | 221500 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ MATSHKALYAN GAYANE 6812890979

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

21/01/2019 17:42:01

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ NERSISYAN ARSHAM 1501640380

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

29/01/2019 10:08:56

ՈՐՈՇՈՒՄ

/թարգմանիչ հրավիրելու մասին/

«14» նոյեմբերի 2018թ.

գ. Բագրատաշեն

ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունքի պետի տեղակալ, ոստիկանության մայոր Կ. Ս. Ներսիսյանս, վերանայելով Վրաստանի Հանրապետության Ջեստաֆոնի շրջանի Քվիդո-Սազանո գյուղի բնակիչ Բեսիկի Թենգիզի Աբաշիձեի վերաբերյալ նախապատրաստված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը 16:40-ին, ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Բեսիկի Թենգիզի Աբաշիձեն, ում մոտից հայտնաբերվել է իր անվամբ DH 611227 համարի, «B» կարգի հայկական կեղծ վարորդական վկայական՝ տրված 21.03.2018թ., B 011-ի կողմից:

Նկատի ունենալով, որ Բեսիկի Աբաշիձեի վերաբերյալ նախապատրաստված նյութերը Վրաստանի Հանրապետության իրավասու մարմիններին ուղարկելու համար անհրաժեշտություն է առաջացել նշված նյութերը թարգմանել վրացերեն լեզվով, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն նյութերը հայերենից վրացերեն թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել Հեղինե Գագիկի Սարգսյանին /ծնված՝ 14.10.1976թ., ՀՀ քաղաքացի, հաշվառված է ք. Երևան, Ա. Խաչատրյան փողոց, շենք 18, բնակարան 32/, ով աշխատում է «Արթ Քոնսալթինգ» թարգմանչական գործակալություն ՍՊ ընկերությունում, ունի թարգմանչի համապատասխան որակավորում, լիազորվել է նշված ընկերության կողմից՝ լինելու ընկերության ներկայացուցիչը ՀՀ ոստիկանությունում:

2.Որոշման մասին հայտնել թարգմանիչ Հեղինե Գագիկի Սարգսյանին, նրան պարզաբանել թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել թարգմանչի պարտականությունները չկատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի
Բագրատաշենի բաժանմունքի պետի տեղակալ,
ոստիկանության մայոր՝ Կ. Ս. Ներսիսյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են թարգմանչի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ Հ. Սարգսյան

«     » նոյեմբերի 2018թ.

# Ո Ր Ո Շ Ու Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

29.11.2018թ.

ք.Նոյեմբերյան

ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի պետ,ոստիկանության գնդապետ Ա.Լ.Անտոնյանս վերանայելով հետախուզման մեջ գտնվող Զուրաբ Օրդենի Կուտալիյաի հայտնաբերման կապակցությամբ նախապատրաստված նյութերը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունքի աշխատակիցների կողմից 27.11.2018 թ-ին Բագրատաշենի Սահմանապահ վերահսկողության բաժանմունքից ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել ՌԴ-ի կողմից այդ երկրի քր.օր-ի 222.հոդ.3-րդ.մասի և 213 հոդվածի 4-րդ.մասի հատկանիշներով հետախուզվող Զուրաբ Օրդենի Կուտալիյան /ծնվ10.12.1959 թ /: Խափանման միջոցը կալանք:

Նկատի ունենալով, որ հետախուզման մեջ գտնվող Զուրաբ Օրդենի Կուտալիյան չի տիրապետում հայերեն լեզվին, իսկ Նունե Անանյանը տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ունի թարգմանչի համապատասխան որակավորում, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Նունե Անանյանին /լիազորագիր թիվ 790 տրված 29.11.2018 թ-ին «Արթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից/ հրավիրել որպես թարգմանիչ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Իջևանի նստավայր ս/թ նոյեմբեր 29-ին ժամը 17.00 -ին՝ բանավոր և գրավոր թարգմանություններ կատարելու համար, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ՝ Ա.Լ.Անտոնյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են
իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ Նունե Անանյան